

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 12/13-5

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի 2012 թվականի դեկտեմբերի 8-ի խորհրդի
նիստի

Օրակարգ՝

1. 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման հարցը
2. Ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքների շարունակական կազմակերպման հարցը:

Նիստին մասնակցում էին խորհրդի 17 անդամներ:

1. Լսեցին 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման մասին հարցը /Զեկուցողներ՝ Ս. Ամիրխանյան, Մ. Հերզնյան/

Ներկայացվեց երեք մասնագիտությունների գծով մագիստրատուրայի և բակալավրիատի 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը:

Արտահայտվեցին Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Մ. Հերզնյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին Կազմել քննաշրջանի ժամանակացույց, այն հրապարակել ֆակուլտետում, տեղակայել ԳՊՀ համացանցային կայքում:

2. Լսեցին Ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքների շարունակական կազմակերպման մասին հարցը /Զեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

Արտահայտվեցին Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Դ. Մովսեսյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Բազոյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին

1. Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի հետ համատեղ հետևողական աշխատանքներ տանել ուսանողների առաջադիմությունը բարձրացնելու, դասերից անհարգելի բացակայող, ցածր առաջադիմություն նրանց ուսանողների ուսումնառությանը հետևելու ուղղությամբ:
2. Ակտիվացնել ֆակուլտետում ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, հնարավորինս շատ ուսանողների ներգրավել տարաբնույթ մրցույթների և միջոցառումների, հետևել և աջակցել ուսանողների հայրենասիրական դաստիարակությանը միտված ծրագրերի իրականացմանը: Ուսանողությանը հուզող հարցերի վերաբերյալ կազմակերպել զրույց- քննարկումներ, զեկուցումներ, համալսարան հրավիրել երիտասարդության բարոյական դաստիարակության խնդիրներով զբաղվող մասնագետների:

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ն. Խանդանյան